



55. ՓԱՄՓՈՒԽՉԻ՛, ՓԱՄՓՈՒՂԻ ՅԱՆԴԻ

Մէ խա խեր, մեր կէլնի, էրկու տղա կէլնի ուրենց՝ մեկ տղա, մեկ արջիկ: Խեր, մեր կմտնեն, ինոնք անտեր կմնան: Կսկսեն ուրենց ամեն ինչ ծախս: Էրկու իրեք ամիս կքննջեն չեն քյաշեն:

- Ստեղաց խաց, - կասեն, - մե խարամ ի, էրթանք ուրիշ երկիրներ:

Կէլնեն ուրենց թանդանոյք կտեսնան, օտար քյաղաքյմ կէրթան: Քյաննիմ օրից սորա կէլնին չարշին ֆռան, կտիսնան, որ խորոտ սխաչիյմ խետ ուր խզմնթքյարին մեչ չարշվին կֆոսա: Լաճու աչք կիմի էրա արջկան: Կիմի յիտվեն, կէրթան չում ինոնց տոան վերեն:

Ախչիկ տոտ կպանա ու կքոծի: Լաճ ինոր միտք չխասկնա: Ախչիկ կփարկանա, խզմնթքյարին կճամփի՝ լաճուն կուտա թփել:

Լաճ ետ կղնոնա, ուր քյուրոշ մոտ կէրթան, կպատմի, կասի. - Գյետ, ըսկնն արջիյմ տեսա, տոտ իպանց, կոծեց, զիկ իտուր թփել:

Քյետր կասի. - Ապա էշ ես, որ տոտ իպանց կոծեց, իմաց իտուր, որ տոտ կիշեր կթոնի պանց, տյու ընչի՞ կայնար էնտեղ, որ քյե իտուր տփել: Իրիկուն, - կասի, - կնն, տոտ իպանց ի, տոնից մտի ներս, դողրի իզյին կնն էնտեղ ավուզմ կա, էն ավուզի վերեն ինոր աչկի:

Լաճն ի, իրիկուն կէրթան, տիսնա, որ աղորթ տոտ պանց ի: Դողրի կէրթան ավուզի վերեն կնստի, արջկան կաչկի: Ախչիկ աշճու խանութ կէրթան, խաց կուտի կպոնի, աշճուն կթամբխի, որ ավուզի վերեն մարթմ կա, էն էլ բերի կերակլի:

Աշճին ի լաճուն կպիրի կկերակլի, էլմ լաճ ավուզի վերեն կէրթան: Քիչմ կաչքի-չաչքի՝ քյուն կտանի: Ախչիկն կուկյն, կտիսնա, որ քյներ ի լաճն: Օստ կչխչփի. ինչ կանի, լաճ չակխե:

Կէրթան աշչիխանից էրկու խատ ճան կպիրի, կթնդի լաճու շեք, կէրթան կքնի:

Լաճն ի կակխի, մարթ չկա, փետր-փետրման կէրթան, իր տեղ կտնոնա:

Կէրթան քյուրտչ կասի. - Կննցի կիշեր չում լոս աչքիցի, մարթ չէկավ, թողիցի էկա:

Քյետրն ի կասի. - Իկեր ի, տյու չես կիտե, ավատա քյներ ես:

Կասի. - Խա՛, վալա. շատ աչքիցի, քյունս տարավ, որ տեսա մարթ չէկավ՝ թողիցի էկա:

Քյետր կասի. - Չէ՛, էն իզյեր ի մե խա քյու կող-կուշտ աչքի:

Օճո կուտա ուր շեք, էրկու խա ճան կա:

Քչեոր կասի. - Տեսա՞ր, ախպե՛ր. քչե սողի տեղ ի տրե՛ ճան թալե քյու ջեռք: Ասե՛
հալս տյու տղա ես, կնա ճան խաղա:

Կասի. - Ապա ի՞նչ անեմ:

Կասի. - Իրիկուն կնե էլ մտում վերեն, խենք էն ի՞նչ կանի, արե զիկ ասա:

Լաճն ի, կերթա՞ն էլ մկալմի ախշկան տուն վերեն: Ախշիկ փենջարից կիրիշկա,
որ կտիսնա լաճուն, փենջարեն կպսնա-կքոժի, կպսնա-կքոժի, էրկու տիր:

Կէլնի լաճ շոտ կվազի, կերթա մո քչեոր, կասի. - Ես կնացի, էն փենջարեն
կայնուկ էր: Էրկու տիր էպաց քոժեց փենջարեն, մաշտենք ի՞նչ ասաց:

Քչեորն ի կասի. - Ախպե՛ր, փենջարեն, որ պնցեց-քոժեց, ասել կուզի, որ տուն
մարթ չէլնե, տունն էլ ես կթողնեմ պաց, որ կուզնա՝ տուտ քոժի: Դողդի արե՛ վեր:

Լաճն ի, իրիկուն կերթա՞ն, մնայր մնասե, ախշիկ թակավորու լաճու ճշանաժ
կէլնի, ինոր խեղ-մեղ կնացիր են թակավորու տուն դնվա՞ր: Կերթա՞ն տուտ կպնան,
ներս կմտնի, խեղք վերեն չէլնե, տուտ կթողնի պնց, դողդի վեր կերթա՞ն:

Կնստեն, շատ խնքնար կուտան, քիչ խնքնար կուտան, կնստեն, կքյենեն:

Թակավորու լաճ էն կիշեր խետ անքյոնեուց դնվորիւն կան կուզն: Կուզն
կտիսնա, որ աներանց տուտ պնց ի: Կես ասքյուր վեր տուն կկայնցուցի, կեսն էլ
կտնի, կմտնի ներս: Կերթա՞ն տիսնա ի՞նչ՝ ախշիկ ջահել տղիմ խետ քչեոր ի:

Շոտմ անր կանի, փայթոն պերել կուտա, էրկուս մեկտեղ կվերցի, տանի տնի
մնհփոս: Կիշեր լաճն ի էտա տուն վերկի անքյոնեուց կաղաճի, կասի. - Կնա ֆլան
փողան, իմ քչեոր դնն ի, մեկ խնքնար ասա, ասա արե, քչե ի՞նչ կուզես կուտամ:

Ասքյուն կասի. - Շա՛տ աղեկ, ի՞նչ անեմ:

Կասի. - Ասա՛, փամփուղջի, փամփուղի լանդի՛:

Քչեոր լսելուն պես խալվներ կփոխի, ճնթ խալվնի կխայնի, հալվա զանել
կուտա քիչ մ թագա խացի խետ, զնմբիլ մեչ լցի, կթնլի քյամակ, կառնի կերթա՞ն:

Կերթա՞ն մնհփոսի տուն վերեն: Առջին տիր անքյոնեուց կցրի, տառնա կասի.
- Աստվաժ սիրեք, թողեք, ես անխտ եմ արե, էրթա՞ն պոնատան մեչ իմ մարդերացն
էլ տամ:

Ասքյոնեոր տուտ կպանան, կթողնեն էրթա՞ն մտնի ներս: Շոտմ խետ ախպոր ուր
խալվներ կփոխի, շոտ զնմբիլ կուտա ախպոր քյամակ տյուս կխանի: Ինք կնստի
ախշկան կուշտ:

Կասի. - Ախշի՛կ, մկա մե հյուքմա՞ր կտանեն, հա՛մ խլցի, հա՛մ լալվի, ինչ որ
կասին՝ ծեն չխանես:

Առատուն լեոս որ կպնցվի, արաբեն կպիրեն, էրկուս մեկտեղ հյուքմա՞ր
կտանեն:

Լաճու քյոր կթաշլայի ճչայ, բոռայ. - Ի՞նչ հնդ ունեք տյուք մե էրկունն էլ
պիրեք պոնեք, մենք էրկուս էլ ախշիկ ենք: Ձեր ախշիկ միսակ թողիր իք, ձիկ
կանչեց ուր ընգչեր:

Էնտեղ կպերեն մահանաթ անել կուտան, տիսնան, որ էրկունն էլ ախշիկ են:
Պայց թակավորու խարս ո՛չ կխոսի, ո՛չ ծեն կխանի:

Կասի. - Վնխեցավ, հա՛մ խլվեր ի, հա՛մ լալվեր ի:

Ինչ կանդար, որ խեքյիմ կպիրեն, ո՛չ պատասխան կուտա, ո՛չ ծեն կխանի:

Աման էն զյնխ, որ ախպոր կճամբխի, կապսպրի. - Խետ որ կերթա՞ն, մեչ ծեռք

Բամբակավաճառ. բամբակդ այրվեց (Ծ.Բ.):

դովորի խալավ առնես խայնես, բաստոն պոնես ծեռո, գյեղզիյ տնես աչիչդ. գյաս
Քյուքմաթի տոտ կայնես:

Օուշեմ էլ ախարից ճյուր լցես, պիրես խետտ, որ լցես ախչկան ակնջի մեջ:

Լաճն ի, շոտ կէլնի խալավ կառնի, կխայնի, բաստոն պոնի ծեռ, գյեղզիյ դնի
աչկերաց, շուշեմ էլ ճյուր կլցի, կառնի կէրթն Քյուքմաթի տոտն վերեն:

Էնտեղ մարդեր կուգյան, կասեն. - Տյու դովոր՞ր ես:

Լաճ կասի. - Խա՛:

Կասե. - Արե՛, էսատեղ խիվանդմ կա, մե խա տե՛ս:

Լաճ կէրթն մերս, ախչկան ականջ կպոնի, ճյուր մեջ կլցի: Էրկու իրեքյ դիր
ըսկուն կանի, կթնփի, կտառնա ախչկան կխարցուցի, կասի. - Կլսե՛ս:

Ախչիյ կասի. - Խա՛, մեյ քիչ կլսեմ:

Ախչկան լեզուն խորոտ կպնցվի, կբաշլայի ճվալ, բոռալ:

Կասի. - Ջիկ ընչի՞ եէք պիրե էտեղ:

Կասեն. - Քյո մշամածն ի պիրե:

Կասի. - Մեմքյ ասե իմ մշամած, էն որ իմ մամուսին տեպավ, իմ մամոան էզսր
գյետին, էլ էն զի խարամ ի կացե:

Նոր վերչեն խեղ ախչիկ կառնի կտանի տուն, կասի. - Ապա, ախչի, տյու վո՞վ
կառնես:

Կասի. - Էն դոքտոր որ զի ազատեց, ես զէն կառնեմ:

Խերն ի, էդ լաճուն կպիրի, կանի ուր տղա, էդ ախչիկ կուտա իմոր:

Կխասնեն ուրանց մուրագին:

